


ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱԾԻՐԱԿԱՆ. — ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ



Հին ՊԱՏԱՌԻԿ ՄԻ

Մ Ո Վ Մ Ի Մ Ի — Խ Ո Ր Ե Ն Ա Ց Ի Ո Ց


Ա Ձ Գ Ա Ց Ի Ն նշանաւոր օրագրաց մին՝ ամսօք յառաջ լուր սուաւ, թէ՛ գերմանացի դիտնական ոմն զտեր է կրկնադիր ձեռագիր մի, որոյ հին կամ ներքեւի գրուածն՝ Մ. Խորենացոյ Պատմութեան մասն կամ հաւտուած մ'է եղեր. բայց զեռ ծանօթութիւն մի չի հրատարակեցաւ, և անուգութիւնն այլ զեռ անստոյգ է: Մ'ենք կ'ընծայեմք անաւանիկ Պատարիկ մի՝ այդ այսօրուան մեր բաւասիրաց ոմանց՝ զար զայժակղութեան, ու մանց՝ հիմն անկեան, ստէպ, երկար, պէսպէս

և անպառ խօսից և գրուածոց նիւթ եղած՝ Մ. Խորեն. Հայոց Պատմութեան՝ Բ գրոց 2Ա-2Բ դիտոց՝ քանի մի աղիւլ: Հետաքրքիր բանատէրք մեր՝ ակնարկելով այսօր վրայ, գուշակեն, որ փոքրագիր հայերէն ձեռագրի մի կողից պահպանակ եղած է Պատարիկս. որքան փափագելի էր՝ որ աւելի մեծ ըլլար այն մատենիկն, որ իր պահպանակն այլ աւելի մեծ ըլլար, այսինքն պատարիկն եւս՝ զոնէ քիչ մի աւելի երկար ըլլար, քանի մի ամբողջ երես ընծայէր այդ բազմաճաշակեալ և բաւնագրօտեալ գրոց. որով, զուցէ զէթ քանի մի հին և այժմու օրինակներէն տարբեր ընթերցուածք եւս կ'ունենայինք: Պատարիկս՝ եթէ չի կրնար շատ բան ընծայել, զոնէ իր հնութեամբն և գեղեցիկ գրութեամբ՝ խորենացոյ բարեկամները կ'ըրնայ միւթաբել, և զինքն զուցէ տգառտել զարէ զար գրորոգաց

ձեռքէն, սահման մի դնել տալով անոնց մղման, որ զոնէ այլ աւելի վար չ'իջեցրնեն զհեղինակը. զոր՝ գիտնական կամ այլ ինչ երանգեամբ՝ մինչեւ յ'Թ զար հասուցին, թէ և վերջերս՝ ինայելով՝ է զարու վերջերուն դարձուցին, այն ժամանակներ թարգմանուած Մոկրատ յոյն եկեղեցական հեղինակին զոր՝ ծէն՝ առած կամ զողջած համարելով՝ խորենացոյ այլեւայլ նման կամ աննման խօսքերն, իր պատմագրութեան մէջ ցրուած : Ասոնց վրայօք չունիմք կամք կամ ակորժ գրելու և քննելու. բաւական շատ են և աւելնալու վրայ են ծրոյգ՝ (չգիտեմ թի՛նչ մակղիր տամ) այդ անձին վրայ, որ երկու դարէ վեր, ազգային՝ և յառաջ քան զազգայինս՝ օտարազգի գիտնականաց քննութեան, զօլուութեան և պարսաւանաց նպատակ եղեր է. և սուրբ Սաղմոսի, Կուրանի, և Տանդէի պէս

բազմաթիւ գրագատութեան այլ ըլլայ. անոնց՝ մեծ բազում, մեզ՝ առ այժմ՝ դժբազում թեամբ. որովհետեւ աւելի քան զդասաբանել՝ դատութեանը երանդ մի տեսնուի ազգայնոցս մէջ. արդեօք արդարապիտութեան զերազոյն աստիճաննոյ մի, թէ հեղինակին Բ զրոց վերջին զվտոյ և Ողբոցն արձագանքը զզացրնելով . . . թողունք զայդ առ այժմ, և նայինք ի վերայ Պատմութիս :

Չեմք վիճեր հուսութեան չափուն վրայ ; այս ինքն զոր պարու զրուած ըլլալուն. տառից ձեւն և մազարթին կըրնայ Թ պարէն այլ վեր ելնել մինչեւ մեր հնագոյն ունեցած, մանաւանջ չունեցած ձեռագրաց ժամանակ. բայց այն հին գեղեցիկ ձեւն աւելի՛ զբքին չափն կամ մեծութիւնն այլ՝ նշանաւոր է : Պատմութիւն երկու կողմի՝ կամ շերտաց իրարու վրայ չհանդիպած պատմական խտորեր



գիտելով կամ համրելով, բազմատութեամբ խորենացոյ՝ որ և է տպագրեալ օրինակի մի հետ, եթէ չեմք սխալիր, հին ձեռագրին մէկ թուղթն իրրեւ 80 տող ունէր. և զի այդքան տողք անհնդդ կ'ըլլան տակէ տակ մէկ

կամ երկու երեսի վրայ շարուելու, անտարակոյս է որ զիրքն երկիջեան կամ երկսիւնակ էր. ուրեմն մէկ սիւնակն իրրեւ 20 տող ունէր. որոց միանգամայն գրուած տեղն կ'ըլլայ իրրեւ քառորդ մի չափու (0,25 հրդմոր.)

որոց վրայ աւելցրնելով լուսանցքն՝ բաւական մեծադիր մատենան՝ մի ձեւանայ. սողերուն անսովոր լայնքն այլ (աւելի քան զՕ,11—2 հրդմոր.), երկու սիւնակաց միջոցն այլ նկատելով՝ ներկայացընեն շատ լայներես գիրք մի, անոր համեմատ ե երկայն կամ բարձր, պանծայի մատենան մի, արժանաւոր հեղինակին և զայն ընդօրինակել տուող անծանօթ անձին։


Կարգանք հիմայ այս Պատառիկս, որոյ առաջին սիւնակն (ըսինք) մասն է Բ կրոց 2Ա զլեռայ, և է այս բան.

ՄԵՌԵԱԼ ԱՐՏԱՇԵՐՈՒ ԹԱ-
 ԳԱՒՈՐԷ ԵԱՊՈՒԷ.
 ԱՐԴ ԹԷՊԷՏ ԵՒ ՈՋ ՏԱՅ ԵԱՊՈՒԷ
 ԶՄԱՄԳՈՒՆ Ի ԶԵՌՍ ՏՆ ԻՒՐՈՑ
 ՍՅՂ ՆԻ ՈՋ ՅԱՐՆԱՑ ԵՐԳԻՐ.
 ԸՆ ԹՈՂՈՒ. ԲԱՅՑ ԱՄԵՆԱՅՆ
 ԱՂԽԻՆ ԻՒՐՈՎ ԱՌԱՔԷ ԶՆԱ

Հակակողմն (չորրորդ) սիւնակին մասն՝ է 2Բ զլեռայ, Խոսրովիղբեռոյ պատմութեան յիշատակն.

ՅՈՂՈՎ Ի ՆԱԽԱՐԱՐԱՅՆ ԸՆԴ ԱՌԱՋ ԼՈՒ-
 ԷՒՆ. ԵՒ ԵԼԵԱԼ ՏԱՇՈՐԵՅ
 ԳՏԱԼԷ ԶՈՎՏԱՅ ՍԵՌՈՒՑԵԱԼ
 ԶՔՈՑԵ ԻՒՐ ԻՍՍԵՐՈՎԻԴՈՒՆՅՏ
 ԵՒ ՊԱՀԵԱԼ ԶԳԱՆՉՍԵ ԼԱՆԴԵՐՑ ՅՈՑԹ ԵՐ-
 ՎԱՅՆՄՏՈՒԹԵԱՄԲ, ՔԱՆՁԻ
 ԵՐ ԱՐԴԱՐԵՒ ԼԱՄԲԵՐ ԹՈՒԹՎԱԼ

Տպագրելոյ նեա բաղդատելով՝ հատուածիս կարճ ճուրհինն չէր կրնար մեծ տարբերութիւն մ'ընծայել. բայց նշանակելի է Խոսրովիղբեռոյ սնուցողին անուանագրութիւնն, ՈՎՏԱՅ, որ ըստ նոր ձեւագրաց Ռոսայ կամ Ալտայ և ըստ ապագրին՝ Օտայ։



Գրութեանս զիտաւոր նպատակն ըլլալով այս հնագրական նշխարիկս յերեւան հանել; և այսու իբրեւ վերջին քարեւ մի տալ (զրուիս կողմանէ) Խորենացոյ, այլ և կամայ և սկամայ՝ ընթերցողաց այլ նայնպէս, հարկ

համարիմ՝ յիշեցընել և քանի մի բան, (թէ հին երեւին և թէ նոր), վիճողաց երկու կողման եւս. ըստ կարելւոյն համառօտութեան փափագելով։

Ո՛վ է Մոլոէս : — Պաշտպանք Խորեւ.

նացւոյ՝ հասարակօրէն կ'ընդունին զնա՝ մեր Ե գարու Ոսկերչինիկ մատենադասց քան, ժաւ մանակակից՝ եթէ ոչ առաջին դասուն՝ գէթ երկրորդին. կամ ըստ ճարտարարանութեան Յովհաննու Խմատարարի՝ յիշելով « զԵզնակ « և զայլսն », և կամ որ ըստ ճոզանէ և ոչ « հետի ի ճոզանէ », կ'անուանէ զՄովսէս Եւզի ոչ սա, ոչ շատք յառաջին յիշողաց՝ Խոսրեմացի չեն անուաներ զՄովսէս, այլ՝ Խմատարար կամ Քերտողոյ և քերտողանայր, կամ Փիլիսոփոս, հետեւի, (ըստ այժմու քննաբանից) որ ուրիշ է սա և հին, ուրիշ պատմին Մ. Խորենացի՝ նորագոյն։ Անհաւանելի չէ երկու Մովսէսից, զուցէ և աւելի՝ զայլութիւնն, այլ ոչ նոյնքան՝ Փիլիսոփային կամ քերտողին և Պատմչին զանազանութիւնն։ Այս պէտքէս յատկութիւններս կու տան Մովսիսի՝ յիշատակողը, սկսեալ ի Ղազարայ փարպեցւոյ . այլ ոչ որ երկու Մովսէս կու յիշէ, թէ և եղած ըլլայ . և ոչ որ կերպով մի կ'որոշէ իր յիշածը, որպէս զի միսի հետ չի շփոթէ իր գրածը կարգացոյն : Յիրաւի, հնագոյն յիշատակողք՝ այնքան զովելի և յառաջադէմ, մեծահարկի հռչակեն զՄովսէս, որ ժամանակու և աստիճանու այլ հնագոյն երեւի՝ քան զկրտսեր Թարգմանիչս : Թեքեւս զայս ի նկատի ունելով նոր դատարանք և դատափեսայ Խորենացւոյ, աւելի եւս պնդեն, թէ հնագոյն մատենագիրք մեր՝ յառաջ քան զժ գար, Խորենացի պատմիչ չեն ճանչցած, կամ զպատմիչն չեն կոչած Խորենացի . իբր թէ Յովհաննէս Զ պատմաբան կամ թողիկոսն՝ ի սկիզբն այն դարուն նախ այնպէս անուանած ըլլայ : Բարի է, կամ ըլլայ . այլ այն հին Մովսէսն այլ պէտք էր որ տեղացի մի ըլլար . ո՞ր տեղացի էր . . . Կորին և Եղիշէ, մտտիկ պատմիչք եւս՝ շատ անգամ յիշուին, և սակայն առանց իրենց տեղւոյ անուան. ինչո՞ւ Հայոց պատմիչն այլ չյիշուեր նոյնպէս առանց տեղւոյ . — Յովհան. Զ. ի գրեթէ ժաւ մանակակից է և հնախոյզ պատմիչն Թովմա Արծրունի. սա շատ անգամ յիշէ զնոյն մեր ինչոքած պատմիչ. մէկ զլիսյ մէջ (Ա, Բ) երեք անգամ . բայց նախ Մովսէս քերտող կ'ըսէ, երկրորդում՝ Մովսէս Խորենացի, երրորդում՝ միայն Մովսէս. յետոյ այլ և այլ ան-

գամ մեծահոյակ քերտող կոչմամբ . վերջը՝ դարձեալ կոչէ՝ ոչ միայն Մովսէս Խորենացի, այլ և իրեն ուսումնակից զԿորին՝ և աշակերտ Մեսրոպայ . — Թէ և ուրիշ մի՝ Թուական յայտնի չէ՝ բայց դար մի յառաջ քան զԹովմա և Յովհաննէս Զ համարուած, և ըստ իրեն ընծայուած մատչողաց՝ (առաք և ձգնառք), և իրեն խօսած տեղւոյն (Երուսաղէմ), հնագոյն եւս զրիշ երեւի՝ Գրիգոր Մարկառացապետ, որ՝ այն սուրբ քաղքին մէջ ներքոյ մի խօսք է ի ս. Գր. Լուսաորիչ . յորում յիշէ, թէ անոր « ազգաբանութիւնն ճառեաց մեզ ա՛րող « Քարտառչարն Մահակայ Բաղրատունւոյ » « Մովսէս Խորենացի, որ կոչեցաւ Քերտո. « զանայր » : Մեր տեսած այս ճառիս օրինակն հնագոյն է քան զժամանակ պատմագրութեան վարդանայ և Կիրակոսի, որք անսարակոյս յիշեն զՄ. Խորենացի անուամբ : Մեր բանասիրաց անձնօթ պիտի չըլլայ նա և Թորոց Գրիգն, որ է հաւանաւն կրօնական խնդրոց համար գրուած թղթոց, սկսեալ ի թղթակցութեանէ ս. Մահակայ ընդ Պրոկիի և Ալիակայ, մինչեւ յաւարտ Պահլաւունի կամ թողիկոսաց մերոց և Ռուբինեանց : Արդ, ասոնց կարգին՝ անմիջապէս յետ վերոյիշեալ թղթակցութեան ս. Մահակայ, և յառաջ քան զԹուրթմ Զ դարու կամ թողիկոսաց մերոց՝ Երտարի և Յովհաննիսի, զասուած է՝ « Երանելոյն մեծի քերտողահօրն « Մովսէսի Խորենացի եպիսկոպոսի », գրած կրօնական խնդրոյ թուղթ մի : Մեզի ծանօթ այս հաւարման օրինակն՝ ճԳ դարուն վերջը գրուած է, այլ յայտ է թէ անոր զաղագիրն և դասակարգութիւնն հին էր : Երանոթ է բանասիրացս ոչ շատ տարիներ առաջ յայտնուած և անսարակոյս ու գրեթէ Թարգմանչաց (զուցէ և Մ. Պատմչին այլ) ակնհաստեսի մի գրածն . այսինքն է Ղազար փարպեցի : Կշռենք պատկառանք և սարսելով այլ, իր՝ աւելի քան զըշէն և մաքէն՝ հագիէն ծագած կայծակը . « Երանելի Փիլիսոս փոսն Մովսէս, որ արարեւ մինչ էր ի մարմնի . . . զխարեական զեպիսկոպոսու « թիւնս՝ նման զԵղոյ մահու՝ արարեալ « հեղձուցին . որոյ՝ ի ժամ վախճանին, « զինչպիսիք ահաւոր նզովս՝ գրով՝ ի մերայ

« պիտարաց քահանայութեանը ասացեալ է ,
« ձեզէն իսկ գիտէք , սեղեկացեալք » :

Գատափեաքն պիտի ըսնն , կեցցիր . այդ ուրիշ Մովսէսն է ըսող է , և ոչ խոր . պատմութեան վերջը գրող Ողբոց հեղինակն : — Կեցցիք և դուք , առաջ տանի Ղազար իր խօսքը . յետ յիշխու գնալածան Տէր Նունի , խորալկայ , Աբրահամ եպիսկոպոսի . « Իսկ և զյառաջագոյն գրեցոց սուրբ արանցն՝ զորս « ի պատմութեանն նահասակին Գրիգորի « գրողնեայ յիշատակէ , զի՞նչ եւս ասացից . « զարդարեւ զարժանաւոր բարեպաշտ կաթո . « ղիկոսէն զարդոյն Նեբսիսէ (խոր . Գ . 1Ը .) « համառօտ յիշուէ և զկրօնաւոր սուբբին . « և այն է զմեծ լուսաւորչէն Հայոց զՏէր Սա . « հակայ (Գ . ԿԳ—Է) , և զայլոց բազմաց » : Միթէ մի ի բազմացն չիցէ՞ և Տրդատ , զորմէ՞ զինչպիսի անաւոր Լաբրտառուչ բանն ասացեալ է ինքն և յինքն իսկ՝ Մ . Խորենացի , (Բ , ՂԱ) « Սոյ երկրորդ պարբերութեան մէջ յիշուածն (Մովսէսն) եթէ ըլլայ խորենացի եթէ այլ սեղացի , սակայն ի պատմութեանն գրած է . զինքը յիշողն այլ Ղազար փարպեցին է . ժամանակակից Մամիկոնեան վա . հանայ մարզպանի , ի վերջոյն Ե դարու » :

Հաւանորէն այս յիշատակն շատ սարի . ներով աւելի հին է , « Կարգառորոտրիսն « Օրմնորոտրիսնարեք Յոսցակի » գրուածն , որ է Յուլյակ մի կամ Յանկ Մաշտոց զրոց հին կանոնաց , անոնց հեղինակաց և թարգման . շաց անուամբըն , և գտուի թէ՛ Կանանձին գրուած (թուղթ կամ էջ մի բան) և թէ հին Մաշտոցաց վերջը . և այսպէս եղած է ի սկզբանէ , մեր (հին և առաջին հեղինակք՝ իրենց գրոց վերջը իբր յիշատակարան կու նշանակեն եղեր թուական մի և ժամանակին հայրապետը , երբեմն և անոնց շարքը . յստաջքան զՀայոց թուականն՝ Լուսաւորի թուականով : Այսպիսի կարեւոր յիշատակարան մի է այդ Օրմնութիւնարեք Յուլյակն , որ կ'իմացընէ թէ երբ սկսա հայերէն գրոց թարգմանութիւնն և Մաշտոցի կարգաւորութիւնն , հետզհետէ թարգմանչաց ի Յունաց , յԱզեբտանգրիոյ և ի Կեսարիոյ բերած կանոններով : Հաւաքման սկզբան թուականն է Լուսաւորչի 111 կամ 115 . տարին . այս

թուականն սկիզբն համարուի սուրբաբար Դ դարու սկիզբն , կամ Քրիստոսի թուին 302 տարին , որով Մաշտոցի և ուրիշ զրոց թարգմանութեանց սկիզբն կ'ըլլայ այլ իբր յամի 414 կամ 418 : Մաշտոցի այդ առաջին կանոնաց կարգաւորութիւնն սեւած է 12 տարի . յետոյ , թէ՛ նոյն Ե դարու վերջերը , Գիւտ և Յովհան Մանրակունի կամ Օղիկոսաց ասեն , թէ՛ յավորպս՝ մինչեւ յ'ժԳ դար , յաւելած են այլ և այլ կանոնք : Առաջին ձեռք զարնողն այդ ամենակարեւոր գրոց , որ հասարակօրէն համայնուի ս . Մեսրոպ , ըստ վկայութեան այս հնաբան Յուլյակին՝ է ս . Սահակն . բայց զործակատարն եղեր է Մովսէս թարգմանիչ , ինչպէս զրեն գրեթէ ամեն օրինակը Յուլյակն , սրոց տասնի չափ տեսած եմք այլեւայլ հնութեամբ ձեռագրաց մէջ : Ընդհանրապէս օրինակքն զՄովսէս կ'անուանեն թարգմանիչ և Գրիչ ս . Սահակայ . բայց կան և գրողք Մ . Խորենացի և (անշուշտ սխալմամբ) Մ . Կիտրենացի . գրողն ինքն Մովսէս այլ կ'ըսէ ի վերջ Յուլյակին . « Այս « ամենայն ի հրամանն սրբոյն իսահակայ « Պարթեւի՝ ձեռամբ Մովսէսի գրչի նորո . « զեցաւ ի Հայք , ի փառս Աստուծոյ » . կամ , « Այս ամենայն կարգեցաւ հրամանաւ սրբոյն « Սահակայ , ձեռամբ իմով Մովսէսի՝ գրչի « Սահակայ Պարթեւի » : Հրամայողին ով ըլլալն և զործադրին Մովսէս ըլլալն՝ անտարակոյց է , զրեթէ՛ նոյնպէս և թուականն . տարակոյցն կ'ըրնայ Մովսէսին խորենացի ըլլալն , նա յինքն Պատմիչն : Եթէ ենթադրուի այս իբրեւ բանիբուն թարգմանիչ մի՛ տարուց այլ չափանոս պահանջուի . իսկ եթէ իբր պարզ գրիչ , ինչպէս որ կ'ըսուի , Մովսէս՝ ի սկզբան կարգաւորութեանն՝ առ նուագն 18—ամեայ կ'ըրնայ ըլլալ , և ըստ ապագայ հոչակին՝ սուրբական չափէ վեր սրամիտ և յաջողակ անձ մի . որ է յետ աւարտման գործոյն՝ իբր աշխոյժ երիտասարդ կ'ըրնայ երթալ ի կատարութիւն հմտութիւն յոյն լեզուի և փիլիսոփայութեան , ի թարգմանութիւնս , և յանչազ քնթեքցումն և հաւաքումն գրոց . և ի զարձին յուսմանց՝ յետ մահուան իր վարդապետացն (Սահակայ և Մեսրոպայ) , կ'ըրնար երկար ստորիներ այլ ապրիլ՝ իսր

ծերութեամբ, մինչև ի ժամանակս Չեռնոսի կայսեր (474—91), յորում սուլթորաբար կ'ըսուի վախճանած. Թողլով Թովմայ Արժրուհայ առատաբար: Ի նշանակած տարիքն՝ 120, զոր նոյնպէս ո. Սահակայ համար այլ կ'ըսէ: Ինքն Մ. Խորենացի թէ Հայոց պատմութեան թէ ուրիշ գրուածոց մէջ՝ ստէպ յիշէ իր ծերութիւնը: Բագրեւանդայ եպիսկոպոսոց (որոց յարձրոգ մի վկայութի Մ. Խորեն.) շարքն և աարիներն այլ՝ յարմարին Չեռնոսի ատեն իր մահուան, որ ըստ ժամանակագրութեան Սամուելի Անեցոյ՝ յարձրոգ տարին եղած է, այսինքն 492:

Ժամանակագրութեան յիշատակս յիշեցընէ ուրիշ մ'այլ, որ մեծ փաստ կ'ըրնար ըլլալ զԽորենացին նորացողաց, եթէ այդպիսի գրուածք չըլլային շարունակութիւնք առաջին և հին ժամանակագրի, և երկրորդին յաւելուածն այլ առաջնոյն անուամբ շիշուէր. Ինչպէս կան գրուածք Անանիայի Շիրակացոյ՝ խառն անուամբ Մովսիսի Խորենացոյ: Մեր յիշելին հնաձեւ բոյրագիր մասնին մի մէջ (որ անշուշտ ձգ գարուն կիտէն առաջ գրուած է), երես մի կամ թուղթ մի բան է, վերնագրուս. « Ժամանակացոյցք Մովսիսի և Գերթողահար »: Այլ մէկ կամ երկու տողով գրէ, յԱզամայ մինչև ի Ջրհեղեղն 2242 տարի, և 25 տողով կու հասցընէ՝ ի բաւանամեկէն կոտսանդիանոսի « ց'18 ամն Հեքսակդի, ց'պանանելն զԹաւրոյ և ցզարն և խային յԵրուսաղէմ՝ 306 ամ »: Յետոյ, ութ տողով կրկնէ թուականներ և վերջացընէ այսպէս, « յԱզամայ՝ մինչև ցնոյն ծը ամն Հերակդի՝ ամք ԲՁՁ (5906) »: Թովմա Արժրուհի որ Խորենացոյ պատմութեան կատարելագոյն օրինակն աւելը, որպակի կ'ըսէ, « Գրեաց. . . զԳիրս Պատմութեան Հայոց Մեքս և ծայր հրաշազան յօրինուածով՝ յԱզամայ և միւսնէ ի կայսրն Չեռնոս »: Ուրեմն սարիշ գրի տակցուցեր է զԺամանակացոյցն ի Չեռնոսէ մինչև ցՀերակլն:

Հերակլի 18րդ տարին է 628 ֆրիստոսի. իբր 140 տարի յես մահուան Խորենացոյ, ըստ ժամանակագրաց և պատմաց: Եթէ Խորենացին կամ որ և է Մովսէս է հեղինակ Հայոց Պատմութեան, սրպիսի ոգւով և կեր-

պով այլ գրած ըլլայ, զարմանք չ' օր բնաւ յիշատակ մի չընէր այդ միջոց ժամանակին՝ թէ ազգային թէ օտար դիպուածոց: Երբացուցիչք հեղինակին՝ շատ փաստեր բերեն, իր լեզուին ոճն, իր օտար հեղինակներէ առած կամ զօգցած խօսքերէն, մանաւանդ յայնպիսեաց՝ որոց ժամանակն յայտնի է Զ կամ է գարոն. սակայն՝ բառական հաստատ և անշուշտ չեն փաստքն՝ հակառակ կարծեաց դէմ, ինչպէս որ գրած և ցուցած են պաշտպանք հնութեան պատմաբանք: Խորենացոյ մեծ յանցանքն է՝ շատ հետաքրքիր եղած ըլլալն կամ շատ հմուտ, որով այնպիսի բաներ յիշած է, զոր հակառակօրէ՛ յետին ժամանակի մէջ յայտնուած և գտուած համարին. և ըստ բառականի չեն զարմանար, որ նա՛ հարգար սարի տալով ճանչցեր է բաներ՝ որ նոր ժամանակներում ծանօթացան զիտոնց և տղիտաց ու Փոխանակ բառական և այլազգ քննութեանց, հզորագոյն զիւս Խորենացոյ նորութեան՝ իր պատմութեան մէջ Ե գարէն վերջի՝ ստոյղ և անհակառակելի յիշատակքն պէտք է ըլլային:

Մինչև որ այս գիտած ըլլայ և ընդունուի՝ դառնանք նորէն մեր հին ազգայնոց, և յիշենք իրենց կարծիքն և համարմունքն այդ Խորենացոյ կամ Մովսիսի վրայ. զոր՝ չկայ մէկն՝ որ զերազանց անձ և գրիշ մի չի վկայէ, սկսեալ ի Փարպեցոյն, և թէ հաճիք՝ անկէ առաջ, ի Սահակեանց. որոց մեծագոյնն (ս. Սահակ Պարթեւ) իրեն գրիշ ընարած է զնա, երկրորդն համանուն նախարարն (Բագրատունին և Արժրուհին) Երկրորդ Սահակ և Մեքս, որով ճանչան զնա, այլ և Հերշտակ ի մարմնի կարծեմ, զնոյն զայս բան զրած էր և Փարպեցին՝ ընելով, « Որ մինչդեռ էր ի մարմնի » . . . և հակառակող ձեռք մի՛ կարած կամ ջնջած է իտարը: Յովհ. Խմաստաւէր կամ թողիկոսն՝ մեք ծակշիւղ վկայ, ի սկզբանէ Զ գարոն, որ ցուցոց Մովսիսի և Եղնակի մտաւարութիւնը ժամանակու, կոչէ զնա՝ « Մեծն Խմաստաւիրաց և և հայկեանց ընդ տիեզերս՝ Տէր Մովսէս »:

1. Դիտելու է Մովսիսի Տէր կոչումը, որ նշանակէ եպիսկոպոս, որպէս էր մեր խնդրած Մովսէսն. Եղնակիցս Բագրեւանդայ և Արշարուն.

Յետագայ դարուց մշտող՝ մինչև ի ժ՛յ, նոյն տիեզերական մակդիրը գրեթէ պահեն անբաժան յանուանն. Ինչպէս թոյլմ. Արծրունին կրինէ, «Տիեզերահանայեայ վարք գապահ և ֆերթող, և մերոյ շուսաշորոս, և քեանցն հաստատագոյն յօրինող» : Աւելորդ համարիմ՝ յիջել և յետագայ ծանօթ համանման զուլութեամբ վկայողքն, նշանաւոր անձինք. որպէս Ասողկն, Մագիս, Թորան, Շորհալին, Համբունեցին, և այլն : Իւ որ մեծագոյն է, Եկեղեցին Հայաստանեայց. որ՝ իր յատուկ սրբոց հետ գասաւորելով գիբերողն Մոսկէս տունէ ընդ Եղիէէի և Գուգիի Անյաղթի : Օրհնեալ ըլլայ այն հայրապետն՝ որ կարգեր է զյիշատակ նոցա ի տօնացոցի, ի ճաշոցի և ի պատարագի. և օրհնութիւնք նոցա՝ ի մասնաւորի փափագելի է ի զլուխ՝ մեր գրասիրութեան կամ գիտութեանց հետեւագաց, որ աւելի զգուլութեամբ և ընարութեամբ գրեն. զատելով զբրտածն ի գրողէն, և ճոխաբար գտափետելով մեր պատմիչը՝ շմոնեան զանձն, զոր ազնի հասարակօրէն նայն համարելով՝ Խօսքնացի կոչմամբ պաշտէ, թէ՛ իբրև գիտնական, թէ՛ իբրև բազմերախտ ազգաբան և ազգագի, և թէ՛ իբրև անձն սրբազան. և յիստունին անխաբր ընդ իմաստուն աշխարհի, որք շատ գիտութիւն ունին, այլ ոչ և զգիտութիւն սրբաց. և որք սուրբ և սրբոց տօն չեն ճաննար, կարծես՝ ոչ փոքր պակասութիւն ունին սրտի նրբազոյն զգոցման ...

Բայց, դարձեալ յերկնից իջնելով յակա-

ղեմիա, հարցընեմք և քննեմք, ի՞նչ բանի համար էր և է՝ այդ մեծ համարումն և յարգութիւն ազգիս՝ առ Մոսկէս, (Թողլով գտնութիւն սրբութեանն) : — Համառօտ բռնելով, երեցածն է, մէկ մի՛ վերջի յիշածիս (սրբութեանն) կից՝ իր արդիւնքն, մեր եկեղեցւոց կարգաւորութեան, թէ՛ նանձօք, թէ՛ գրութեամբ ճարտի և մանուկն Շարականաց. և անա զայս նշանակին թ. Արծրունոյ և Մահականց վերայիշեալ բաժնքն. որոց նման՝ ոմանք այլ կ'աւանդեն, թէ յետ վախճանի ս. Մահակայ և Մերովայայ՝ քանի մի ասի ի շփոթ ժամանակի, Մոսկէս, Մամբրէ և Դաւիթ, ըստ այլոց և Ղեւոնդ Երէց, կու հոգային զկաթողիկոսաբանն : — Երկրորդ, իր խոր իմաստասիրական գիտութիւնն, որոյ համար մեծ փիլիսոփոս անուանեցաւ, և յատկապէս քերականական գիտութիւնն և զբաժն, որոյ հատուածք նշանակին ի հին ֆերականս կամ ի Մեկնութիւնս քերականաց. տսոնց հետ և աստուածաբանական նուրբ խնդրոց վարչոք գրուածն՝ փիլիսոփայական օճով և որոշմամբ : Քիչ ըսն Յնացեր է հիմայ այս երկու տեսակ գրուածներէն, որք չեն բաւական իր մեծ տիեզերահոյակ անուան հաւասարակշիւելու : Երրորդ մի. յարգն և վարկ Մոսիսի՝ և անտարակոյս իր Հայոց Պատմունքիսն, որ և մեր այս գրութեան մասամբ առիթն է, այլ ոչ և մանրամասն քննութեան :

Հիմայ իր գատարանքն պիտի հարցընեն ինձ. կ'արժէ՞ այդ պատմագիրքն՝ իր այդքան մեծ անուան : — Պատասխանեմ, Ոչ և Այո. միաբանիմ իրենց՝ այդ գրոց և պատմութեան մէջ շատ սխալ և ստուգազոյն պատմութեան բանից անհամաձայն գտուելուն, ըստ այժմոս օրինակաց գրոցն. և ըսեմ՝ Ոչ : Բայց լիարբան և լիտիրոս կ'ըսեմ Այո. նախ, հաւատարմով որ այս յիշեալ օրինակը գրոցն՝ չեն կատարեալ և հաւասար գրուածք մեր հին պատմիչին. և զինքն արգարապէս դատելու և կշռելու համար՝ պէտք է՝ զօնէ թոյլմ. Արծրունոյ օրինակն ունենայ, եթէ այն այլ բաւական փետտած չէր իր փարպեցւոյ յիշած հակառակօրդներէն : Պատմահայրն՝ զեղեցիկ տրամաբանութեամբ՝ երեք զիրք կամ հատուած (հատար) բաժնած և զգործն, ըստ

նեաց. այս ետքի գաւառիս կամ կամարտակաց եպիսկոպոսոց գաւաղանագիրն՝ կ'ըսէ. որ զս և Բագրևանդ առաջ մէկ թե՛ծ կամ վիճակ էին ս Մինչև ցփախնան Քերզոզահօրն երանելոյն և Մովսէսի եպիսկոպոսիս : Ետս սրոյ յերկու բաժնուի թե՛նն, և այն բաժնմանէն մինչև ցՔրէզոր Արշարունի 11 եպիսկոպոսք յաշորքն, ապա Քրէզոր, և թէ՛ այսօր եպիսկոպոսութեան 23 սրդ աւրին՝ էր Հայոց 158 իտականն, որ է Քրիստոսի 706. Իսկ այդ 11 եպիսկոպոսոց իւրաքանչիւր յաշորութեան ժամանակն (որ քիչ շատ կ'այլալի ըստ ճեռագրաց, ինչպէս որ և է թուականք) զուժարուի 200 տարի կամ քիչ աւելի. ուրեմն ի մահուանէ Մ. Քերզոզահօրն մինչև ի Քր. Արշարունի 200 տարի անցեր է. ապա որ թուականին վախճաներ է Մովսէս, ո՞վ քննադատ :

ժամանակի ընթացից. — Ա. Մեծկարսևնաբռնակ
 Հայոց, որ հիմայ հին պատմութիւն կոչուի.
 — Բ. Յատաբարհմոտրեան Հայոց կամ Միշակ
 Պատմաբան. — Գ. Աւարտարանոտրեան կամ
 Աւարտումն Հայոց, կամ Յանկ Ելանեղ Պատ-
 մաբան Հայոց: Այս մեծ և ճարտար որոշ-
 մանց համեմատ չէ քանակ զրոցն, որոց հի-
 մակուան օրինակաց մէջ այլ՝ տեղ տեղ յիշէ
 հեղինակն, թէ պատմութիւնը յետոյ պիտի
 լեցընէ: Եւ հաւատամ թէ լցեր է որ և է
 չափով. և դեռ գտուին ի ձեռագիրս քանի
 մի գլուխք կամ հատուածք բանից, համա-
 նմանք բանից, ոճոյ և ողւոյ մեզ ծանօթ
 պատմըին. որոց կարգէն հաւանական է ս.
 Ոսկեանց պատմութիւնն, մասամբ և Սու-
 չիասանց, որ հրատարակուած են ի ժժ հա-
 տարի Սոփեբայ: Այլ առակել եւս յայտա-
 նիշ է և վկայեալ՝ Մեծին Տրուտոյ յուղար-
 կաորութիւնն, բաղգատէ զայն բանասէրն՝ Խո-
 բննացոյ Բ զրոց վերջին գիտոյն հետ, և կըրնայ
 երկու գրուածքն իրարու հազընել և լրացընել.
 մանաւանդ ի յիշելն և վկայութիւն թովմայի
 Արծրունոյ, վասն այդ մեր մեծ և սուրբ թա-
 գաւորն. « Փոխի . . . ի հանգիտս, մեծաւ
 և պատուով թաղարարականն և շքեղ և եւ.
 « րեւելի գիտարարութեամբ. որպէս ընթեա-
 ւ նումը՝ ի քանիքան գրականգոռեանն
 « Մովսիսի տիեզերաճակեալ վարդապե-
 « տի . . . որպէս պատմէ ի գլուխ (?) Եր-
 « կրորդի պատմաբանն »: Այդ Երկրորդ
 պատմութիւնն՝ կըրնայ իմացուիլ Բ գիրքն
 կամ Միջակ պատմութիւնն, և անորոշա-
 բար անոր գոչիս բաժնն այլ՝ աւելցընելով
 իմանալ վերջին գլուխ. կըրնայ այլ իմացուիլ
 հիվու մեր ունեցածն տարբեր գրուած մի.
 և նոյն այն՝ զոր նոյն թովմ. Արծրունի երկու
 անգամ անուանէ, մէկ մի (Ա, Բ) Չորրորդ
 զպրորոքին, մէկ մ'այլ (ի վերջ Ա զրոցն),
 « Չորրորդ զորաւոյ իտատարանեայ պատ-
 « մաբան Մովսէսի Խորենացոյ, վերա-
 « զարանայ ի վերայ երեցոանց գրուագեալ
 « հատուածին »: « Քիչ առե՛ն տուալ բանա-

ւեր զրոգ մի (չուցէ և այլք)՝ պէսպէս մեկ-
 նելով՝ շնորհմոր Խորենացոյ Գ զիրք մի, և
 ի վերայ առիչ երեքին վրայ վերադառնալը.
 զայդ՝ իրեն առանձնական կարծիք թողով ի-
 րեն, ընդունիմ թովմայի բաժնն պարզ
 իմաստը, զոր և հաստատեն մեր նախայի-
 շեալ և ձեացեալ պատմական բանն, ար-
 տալոյ մեր ունեցած և սպազրած երեք զրոց:
 Ուր թողունք որ Գ զրոց կամ Աւարտարա-
 նութեանց զիտց ցանկին վերջը՝ ձեռագիր մի
 ունի վերնագիր փափակելի վերջին զիտ-
 կամ յիշատակարանի մի եւս. այս է, « Տաղք
 յափառ, յիսը և ի Սահակ Բագրատունի »:

Այսչափս բաւական է կարծեմ հատարակաց
 մտաց՝ ընդունելու, որ Մովսիսի Խորենաց-
 ոյ այժմու սպազրեալ և ծանօթ ձեռագիրք՝
 չեն նորս կտտարեալ Պատմաբանն Հայոց.
 և թէ, նա բրած է գրած է մեզ անձնօթ
 մասամբ՝ վերադարձոտրեան մի ծանօթ երկց
 զրոցն վրայ, իրբեւ անոնց յաւելլուած, լրումն,
 և ուղղագրութիւն, նա և շարայարութիւն
 պատմութեանն, մինչեւ ի ժամանակս Չեոնոն
 կայսեր. որ և յուսայի է թէ ունէր շատ
 սրբագրութիւն և պարզբանութիւն առային
 գրուածոցն. և թէ, աստուց գասոնք ունեալ
 լու, կարելի չէ ստուգութեամբ դատել և
 դատափետել գլխամին Հայոց՝ Մ. Խորե-
 նացի:

Բայց, այդպէս ընողք՝ պիտի բենն, թէ

բան մի հրատարակուած է Մ. Խորենացոյ Գ
 զրոց վրայ. չ. յորում յիշուին այլեւայլ պատ-
 մական գրուածք կամ հատուածք, որք կամ
 իր անուամբն իսկ կամ գրուածին ոճէն գու-
 շակուելով՝ իրեն կ'ընծայուին. նոյնպէս յի-
 շուած են հոն այլեւայլ տողեր, զոր իր մեզ
 հիմայ անձնօթ Պատմութեաններէն քաղած է
 Ստ. Կանոնիկոս Կամենիցայ՝ իր հայ-լատին
 բառարանին մէջ: Հասին խնդրոյս հետաքննողք՝
 աչքէ անցընել այդ 1881ին գրուածը, ուր հրա-
 տարակուած է նաեւ այդ մեծին Տրուտոյ մա-
 հուան Յուղարկաւորութեան վերաբերեալ մե-
 ծահարկի և թանկ գրուածք, որ քաղուիին Մ.
 Խորենացոյ զրիչ և արտ համն, հոտն և կայծն
 ունի, և իր քանի մի ուրիշ պատմական գր-
 օնց հետ՝ գրուած դո՛ւռուի ծժ զարու կամ ծժի
 սկիզբը, մեծ և հնագիր չքեալ ձառընարի մի
 մէջ. գրուածքն և գրուագելոյն և սակեատու
 գրուագելու արժանաւոր վերնագրով.

1. Իրեւ յեռուն տարի յառաջ (1881) Բաղ-
 մաճկ պատմագրի Բ հատորի մէջ (երես 69-73)

մեր դատաստանն անձանօթին վրայ չէ, այլ մեր ձանչած և ունեցածին : — Այսոր պատահանեցի և Յաի բռնելու Ոչ և Այս : — Այդ բաւական չէ, կ'ընեն զննադատք. եթէ խորենացին Ե դարձ պատմիչ էր, քննչպէս այդ սխալներն բրած է : — Ես ալ կ'ըսեմ, եթէ նա է-թ դարձ եղած ըլլար, չէ՞ր կրնար հին պատմութեանց մէջ աւելի այլ սխալիչ կամ, Յունաց ու Պարսից նորագոյն պատմութիւնն աւելի քողոյզ գրել : Այդ արարում (է-թ) ո՞ր գառէր այն Մովսէսն՝ որ այնքան զբանձաւ ըլլայ, և այնքան հին, հազուագիւտ ստիլաւանանօթ հեղինակներէ ձայն տայ : Ի՞նչ դժբաղ կարէր էին զորս՝ (Ե, Ը, Թ) մեր ազգի համար : Դուք՝ ողորմած կայսերաց տրծաթեւ հովանեաց տակ ապանովեալ՝ նստիք : ո՞վ եւ ձեր գրչով կարէք ու կարէք. աւելք մէկ մի ձեռքայն դարերու պատմիչ-

ներք, Սերբոս, Դեռնդ, Յովնանեզ, Վահան Գողթնացոյ վրայսիբն. բարձրք, նա՛ յեցէք, քննչ զունով պատած ցոցընեմ ձեր հայրենիքը. չէք տեսներ արաբական արդ և հոյ այրածը, արածը, կտրածը, ցրածը և կողէք՝ որ այդպիսի նեղ տարիներուն՝ զտոի այնքան լայնիւրձք լայնիրտ Մովսէս մի, որ ձեզ նման հանգիստ նստած՝ արաւ պեղախան ստեղծարանէ իր նախնեաց պատմութիւնը, և ըլլայ այն Մովսէսն՝ որ իր սիրելի վարդապետաց ա իր վերջին թագաւորին (վսամշապհոյ), և անոր հակադէպ նախնոյն (Տրգատայ) վերայ՝ այնպիսի արտասուշ ողբեր թափէ, զեա իրքեւ մտ և ներկայ տեսնելով զանձեք : Բ՛վ. :)


Հապա ուրեմն, կրկնէք, եթէ այնպէս հին էր Մ. խորենացի, աւտո՞ր այդքան

« Յաղագս Ժամուանն Տրդատայ Թագաւորի Լզորի, Քագի եւ Աւարմիւլի » . և զբ ջարձեալ հրատարակեմք ի դերութիւն անոնց՝ որք շկախեան զտեւէ Բազմավրչպն այդ հին հատորը :

Իսկ թագաւորն Տրդատ՝ յետ հաւատոցն ի Գրիտոս, ամենին աւազընութեամբ փայլեալ մինչեւ ցճախանն արի ծերութեան : Այլ խտաւարութիւն ազգիս մերոյ, կամ ամբարբաւաւանութիւնն որ ի սկզբանէ պատահեցին՝ ամենայն զորմանց սոցա պատճառք. քանզի շարք ոմանք հրամանաւ Դաւիթո՞ խորհեցան սպանանել զՏրդատ, և միւսանգամ անդրէն զփոսպաշտութիւնն հաստատել յաշխարհիս Հայոց. յորում խորհրդի լեալ էր և սենեկայեան Տրդատայ, ըստ օրինակի Յուդայի մասնչի : Բայց ոչ գիտէր թագաւորն թէ քանիք կամ ո՞ր իցնն. վասն որոյ կոչեալ զսենեկայանն զայն, հարցանէր, եթէ իցէ՞ ինչ ի զրանս արդարեւ այսպիսի խորհուրդ : Ես իրքեւ լուսու զաւելի Հարեալ արտարեկ լինէր, և ուրացաւ թէ ոչ երբեք լուսել է իմ այսպիսի բանս. վասն որոյ ելեալ առ ընկերոն երկիւղացին, ի բաց կորուսածէին զխորհուրդն անօրէնութեան՝ որպէս զարհուրեալք : Բայց ինքն թագաւորն ոչ աւելով զուլ՝ հեռաւայր յարեւմուտ կոյս մինչեւ ի գաւառն Եկեղեաց, տեղի տուեալ լրոյն այնորիկ : Եւ քանզի բազմաք էին ի խորհրդին, ոմանք զկնի նորա գնացին, մանաւանդ ազատքն Սիւնեաց կողմնացն, որք առաւել հրամանաւ կատարք Դապհոյ լինէին, վասն աշխարհին

խրեանց խաղաղական Պաւլոյ : Որք և ի յորս երէնց երբեմն ընդ թագաւորին լինելով՝ յորոց և խոցեալ ինի թագաւորն, որպէս թէ յանգէտ ուստեք զիպաւ պատահեաց նեմս : Եւ եկեալ յարքունիս՝ զնի ի մահչիս, սակաւ ինչ վիրաւարեւ : Յորոց մտեալ սենեկապանն այն պատել զվերս նորա, և տեսեալ զի ոչ մտանել նմա ի վիրէն՝ արքունեք գեղ մահու և վախճանէ. որ յետոյ յայանի իսկ եղեւ ի նորին խորհրդակցացն : Եւ բարձեալ արարան զնա ի Թորդան՝ արծաթապաղ զիակիր դազաղօք. յորում լծեալ չորիք սուկեսանէք, և զունակ զունակ հանդերձիք զքաղաքարն զարդարելով և վաշտք զորացն աստի և անտի վաւառք զհնուք և նշանակօք. իսկ առաջի դազաղօքն՝ ձայն աստուածօրէնութեան և բուրմունք խնկոց. իսկ աստի և անտի բարեկամք և սիրելիք, ընտանիք և բազումք յորոցն նորա հետեւակ անգեալ, և վկնի դազաղօքն՝ փոքր և տակիք ուրոց, և կուսանք ուրասաց. Թող զայլ ամենայն յամիկան, որ երթային զհեռանթիւ բազմութեամբ : Եւ այսպէս Հատեալք ի տեղին, արարեալ տապան թագաւորական, զանուշահոտ զպատարացն, զմեծ փաստակաւորն. և արարեալ թագին զնա ի՞ տեղով սրուանաց մեծին Գրիգորի, զոր պարտեալ անուանեաց իր պարտէջ : Եւ կանոնեցին զոր կատարման նորա տունի ամ յանէ. զոր յանձն արարեալ եպիսկոպոսին փեղին՝ Գուացին, Տրդատ թագաւորեալ ամս 57, և ապա կատարեալ ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ :

սխալներ սպրդած են պատմութեանը մէջ, —
 լսի, որ այդ սարգելու համար պէտք էր
 հեղինակին հարազատ հին գրութիւնն ունե-
 նայ. և դարձեալ, կրթնան ուրիշ հնարք և
 մեկնութիւնը այլ արուիլ, զոր ձեզ թողում
 մտածել և չուծել: Իսկ ես հիմայ կ'աւել-
 ցընեմ Երկրորդ և վերջին. որ Մ. Խո-
 ըն'նացոյ Պատմութիւնն Հայոց՝ նա և այժ-
 մեան գրից մէջ՝ մեծ յարգ ունի՝ բազմա-
 դիմի աեսութեամբ, զորս առանց բացա-
 արելու կ'իմանան բանասէրք, նոյն ինքն և
 բանագաստն: Իբր ազգային՝ միանգամայն և
 անաշուտ եռանդն, սուր զատողութիւնն,
 համառոտութեամբ հանդերձ հարուստ լեզուով
 շատ բան ամփոփել և իմացընելն, ազգի մի
 (Հայոց) ի սկզբանց ազգաց պատմութիւն մի
 հանել կանգնելն, որքան և վիպասանական
 կամ առասպելախառն ըլլայ, նա և որքան
 սխալներ ունենայ, իր անհուն հմտութիւնն
 և քննութիւնն անթիւ գրոց, որքան և տեղ
 տեղ պակասաւոր ըլլայ, և յիշողութիւնն
 երբեմն շփոթած ըլլայ. իր այնչափ բազմաթիւ
 յոյն և օտար հեղինակաց ծանօթութիւնն,
 և շատոնց անունները տալն, որք հազիւ կամ
 ցտն և ցիր գտուին, կամ ոչ իսկ՝ ուրիշ մա-
 տենագրաց քով. և որոց համար եզրպացի
 գիտնականը զարմացեր և բռեր են, թէ յետ
 Եւսեբիոսի՝ Խորենացոյ պէս բազմահմուտ
 մատենագետ չէ եղած այն դարերում: Այս
 և ասոնց նման ձիրքն և իր մեղի թողած
 յիշատակքն, ինչ երեւին, որ նախ, այդ
 Մովսէս և Խորենացի կոչուած պատմիչ մի
 եղած է հին և Ե դարում, եթէ եղած ըլ-
 լան և ըլլան նոյնանուն գրողք և պատմողք՝
 բնի առաջ կամ բիշ վերջ ժամանակաւ:
 Երկրորդ, նոյն իսկ մեզ ծանօթ այժմեան վի-
 ճակի մէջ գտուած հեղինակն և գործն՝ այն-
 քան յարգելի և երախտաւոր է Հայոց ազգիս
 Պատմութեան, Դպրութեան, Եկեղեցոյ և
 սիրոյ, որ համարանկիմ գնել զնա՝ արդեանց
 կըոց մէկ նժարին մէջ, և հրաւիրել. հնպա,
 թի որ ի դատարանին նորա՝ ունի այդ չորս
 միբքը, ման՛է ի միւս նժարը... Թող պատէ!
 Հայութեան հոգին և Արարութիւնն:



ՀԱՅ ԱՇԽԱՏԱՆՈՒԹՅԱՆ ԼԵՁՈՒՆ

ԲՈՒՍԱՆԻ ԿԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՆԱԽ ներողութիւն ենք խնդրում յար-
 գելի խմբագրութիւնից, որ մեր այս յօդուա-
 ծով բնկելու ենք Բաշմէրդի մի բանի երես-
 ները, մի այնպիսի խնդրի վերաբերմամբ,
 որի մասին շատ անգամ խօսուել է հասա-
 բակական զանազան շրջաններում՝ և նոյն է
 գրաւել լրագիրներին շատ էջերում, բայց որը
 նոյն իսկ այժմ՝ շարունակում է հանդիսա-
 նայ ընդհանուր ուշադրութեան առարկայ:

Թէ ինչպէս սկսեց ծագիկ հայկական աշ-
 խարհաբար լեզուն Ռուսահայաստանում և
 թէ սլքէր եղած նորա տարածման կարպետ-
 ները, դա մեզ այժմ բիշ է հետաքրքրում:
 մեր նպատակն է առ այժմ՝ կանգ առնել
 մասնաւորապէս հայկական լեզուի ներկայ
 դրութեան վերայ, աշխատելով ցոյց տալ մեր
 ոյժերի համեմատ թէ որքան մատչելի է նա
 մեր հայ ժողովրդի միջին և ընդհանրապէս
 ստորին դասակարգին, և թէ ի՞նչ պայման-
 ներով նա կարող է տարածուիլ ժողովրդի
 ամենաստորին խւերի մէջ, դանալով նոցա
 սեփականութիւնը: Բայց որովհետեւ քմէն
 բանի մէջ ներկան համարեա թէ չէ կարելի
 բացատրել առանց անցեալի ներգործութեանը
 և նրա թողած ազդեցութեանը, ուստի լաւ
 կը լինէր անցնել մի հարեանցի ակնարկ ձգե-
 րով նորա վերայ:

Ինչպէս յայտնի է ամենին, զորարարի
 անկումից յետոյ՝ աշխարհաբար լեզուի հիմ-
 նագիւններից առաջինը՝ մեր ժողովրդական
 աղբատիկ գրականութեան մէջ, ամենայն ի-
 բրաւունքով կարելի է հաշուել թ. Արտիեան
 իւր «Վէրք Հայաստանիում» նորա այս
 գրութեանը այսօր չէ կարող պատկերանալ
 հայ ժողովրդի առաջ որպէս մեր գրականա-
 կան լեզուի մի նմուշ, որովհետեւ Արտիեան
 իւր գործի սկզբնաւորութեան մէջ ըր գտնե-
 լով այն բաւարար միջոցները, որ այժմ